## Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների, բողոքների 2016թ.-ի առաջին եռամսյակի ամփոփագիր

2016թ-ի առաջին եռամսյակի ընթացքում ստացվել է 507 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 434 քաղաքացի: Դրական պատասխան է ստացել 391-ը, մերժվել՝ 23-ը, ընթացքի մեջ է 20 դիմում: /Դրամական օգնության դիմումները մերժվել են հիմնականում կրկնակի լինելու կամ ընթացիկ եռամսյակում օգնություն ստացած լինելու հիմքով/:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 5 քաղաքացի, որից 3-ի խնդրանքը բավարարվել է, 1-ինը՝ մերժվել, 1 դիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 40 դիմումից դրական պատասխան է ստացել 38-ը, մերժվել է՝ 1-ը, 1 դիմում ընթացքի մեջ է: /Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած 12 քաղաքացիներից 7-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 3 դիմում մերժվել է, 2 դիմում ընթացքի մեջ է /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմած 1 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել են 8 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է/ հողաշինության հարցերով դիմած 3 քաղաքացիներից բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 1 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Այլ բնույթի 3 դիմում է հաշվառման վերցված, որին տրվել է դրական պատասխան:

ժ/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ